

Հարմար-նոր ժամկետային ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգ

«Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ -
ի կողմից ֆիզիկական և
ձանցից և անհատ ձեռնարկատերերից ընդունվող ժամկետային ավանդների տարեկան տոկոսային եկ
ամտաբերության հաշվարկման կարգը հետևյալն է.

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևերի համաձայն
,

1. $APY = (1 + r / n)^n - 1$, Որտեղ՝
1. A - ավանդի սկզբնական գումարն է:

APY – Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է (APY – Annual Percentage Yield)՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը ավանդատուի կողմից ավանդի հետևյալված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

r – Տարեկան պարզ տոկոսադրույքն է (r – Annual Rate of Simple Interest)՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքն է, որի հիման վրա Բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:

n-

Մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է՝ ցույց է տալիս, թե մեկ տարվա ընթացքում քանի անգամ է կատարվում ավանդի գումարին տոկոսագումարների ուղղակի մուտքագրումը կամ ավանդատուին տոկոսագումարների ուղղակի վճարումը:

$$A = N \sum_{n=1}^{\infty} \frac{K_n}{(1 + APY)^{365}}$$

որտեղ^a

2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4. K_n - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5. D_n – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական^a n-

րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում,
երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D1 = 0$:

6. Ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվում ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը:

Որքան հաճախակի լինի տոկոսագումարների կապիտալացումը, այնքան բարձր կլինի տարեկան տոկոսային եկամտաբերությունը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ -

ի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ չեն սահմանված: